

ԱՆՀԱՅՏ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐ ՀԱՅՏՆԻ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՎՐԱ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈՋՑԱՆ

Ուրարտուի տիրակալների մեզ ավանգած գրավոր աղբյուրները (տա-
րեգրություններ, կոթողներ, ժայռափոր և վիմագիր արձանագրություններ,
կավե սալիկներ, արձանագրված առարկաներ), որ 1828 թ. սկսած հայտնա-
բերվել և հայտնաբերվում են Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում,
հիմնականում հրատարակվել են Գ. Մելիքիշվիլու կազմած ժողովածուի էջե-
րում¹ և Ֆ. Քյոնիգի մեծագրության մեջ², որոնցից յուրաքանչյուրը մինչ այդ
կատարված ուսումնասիրությունների և անձնական տեղանշան աշխատանքի
արդյունքն է: Այդ աշխատանքների աստիճանական զարգացման ընթացքը
նկարագրված է Բ. Պիոտրովսկու կողմից³: Մասնակի հրատարակություննե-
րով լույս են ընծայվել Կարմիր-բլուրից և Վանից հայտնաբերված կավե սա-
լիկների նյութերը⁴, Կարմիր-բլուրի սեպագիր տեքստերը⁵ և Արին-բերդի ար-
ձանագրությունները⁶:

Շատ հաճախ նոր հայտնաբերված արձանագրությունների մեջ հանդի-
պում են ուրարտագիտությանը դեռևս անհայտ գաղափարագրեր, որոնք վեր-
ծանվում և թարգմանվում են անմիջապես: Սակայն, պատահում է նաև հա-
կառակը, երբ գաղափարագրերի ընթերցումը կատարվում է չափազանց ուշա-
ցումով:

Նորագյուտ արձանագրություններում, անհայտ գաղափարագրերի վեր-
ծանման ուղղությամբ, վերջին 25 տարվա ընթացքում (1950—1975 թթ.) բա-
վական մեծ աշխատանք է կատարվել:

Բ. Պիոտրովսկին Կարմիր-բլուրի արձանագրված առարկաների վրա
հայտնաբերեց և վերծանեց մի քանի գաղափարագրեր, որոնցից կարելի է հի-
շատակել հետևյալները.

1. NIG.BA «նվիրել»⁷:

¹ Г. А. Мелнишвили, Урартские клинообразные надписи, М., 1960: Առաջին հրատարակությունը՝ «Вестник древней истории», 1953, № 2, 3, 4, 1954, № 1, 1971, № 3, 4 (այսուհետև՝ УКН):

² F. W. König, Handbuch der chaldäischen Inschriften, Graz. 1955—1957 (այսուհետև՝ HChI).

³ Б. Б. Пиотровский, Ваиское царство (Урарту), М., 1959 (այսուհետև՝ ВЦ), էջ 7—12.

⁴ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УПД).

⁵ Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966 (այսուհետև՝ НУНҚБ).

⁶ Н. В. Арутюнян, К. Л. Оганесян, Новые урартские надписи из Эребуни («Вестник древней истории», 1970, № 3, էջ 107—112, այսուհետև՝ НУНЭ).

⁷ Б. Б. Пиотровский, Кармир-блур, Ереван, I, 1950, II, 1952, III, 1955 (այսուհետև՝ ҚБ). I, էջ 50 (УКН, № 175, տող 1), III, էջ 35 (УКН, № 149a, տող 2) և այլն.

2. BA Ենվիրել⁸, որ հանդիսանում է նախորդ NĠG.BA Ենվիրել գաղափարագրի հապավված ձևը:

3. NĠG.GA Եսեփականություն⁹: Սակայն, NĠG.GA (աքքադ. makkuru) նշանակում է ոչ միայն Եսեփականություն, այլ նաև «գանձարան»¹⁰, ուստի urishuse բառը, որ թարգմանվում է «զինանոց»¹¹, թերևս անհրաժեշտ է դիտել NĠG.GA «գանձարան» բառի վանկագիր տարբերակը և նույնպես թարգմանել «գանձարան»:

Ի. Դյակոնովը ուսումնասիրելով Կարմիր-բլուրի գրավոր նյութերը (կավե սալիկները), հայտնաբերեց և վերծանեց մինչ այդ ուրարտագիտությանը անհայտ մի խումբ գաղափարագրեր, որոնցից կարելի է հիշատակել հետևյալները.

1. LÜA.NIN Եարքայորդի¹², կամ ավելի ճիշտ՝ Եթագուհու որդի¹³: Այս իսկ պատճառով էլ Ի. Դյակոնովը ենթադրում է, որ Ռուսա III-ը՝ Եթագուհու որդին, քանի որ կրում է հոր՝ Ռուսա II-ի (685—645 թթ. մ. թ. ա.) անունը՝ I Ru-sa-a-I I Ru-sa-he¹⁴ այսինքն՝ «Ռուսա Ռուսայորդու», ուրեմն ծնվել է նրա մահվանից հետո¹⁵: Հստակ. Հարությունյանի այստեղ նշված Ռուսա III-ը, թերևս, Ուրարտուի վերջին արքա Ռուսա IV-ն է, քանի որ հիշյալ անունը կրող ուրարտական երեք արքաներից և ոչ մեկը իր հոր անունը չի կրել, բացի այս մեկից¹⁶:

2. GEMEGASAN(?) Եիշխանահի¹⁷:

3. IGI.É Եսաուգված է¹⁸:

4. LUKUG Եգրամի մարգ¹⁹: Սա հին արևելյան սեպագիր լեզուներում չի հանդիպում²⁰: Սակայն, մեր կարծիքով, LUKUG (իմա՝ LUKU) գաղափարագիրը LUKÜ.DIM կամ LÜKÜ.DIM (աքքադ. kuṭemmu) «տակերիչ», «արժաթագործ»²¹ բառի կրճատված ձևն է, մի երևույթ, որը ոչ այնքան հաճախ, բայց հանդիպում է ուրարտերենում: Հակառակ դեպքում LUKUG գաղափարագիրը կարող է դիտվել որպես Եգրամագործ(?): Սա այնքան էլ հավանական չէ, քանի որ դրամը որպես այդպիսին առաջին անգամ հանդես է եկել Լիդիայում²², որը վկայված է Գիգեսի (687—652 թթ. մ. թ. ա.) դրամներով²³:

⁸ KB, III, էջ 40 (=YKH, № 149b. տող 2):

⁹ KB, II, էջ 56 (=YKH, № 191—192, տող 1) և այլն:

¹⁰ R. Labat, Manuel d'épigraphie akkadienne, Paris, 1952 (այսուհետև՝ MEA), № 597:

¹¹ YKH, էջ 412:

¹² УПД, № 7, կնիք, տող 1 և էջ 92:

¹³ УПД, № 4, կնիք, տող 2 և էջ 62, 79:

¹⁴ УПД, № 4, կնիք, տող 1 (որտեղ անվան բացահայտվել տառադարձության մեջ երկու դեպքում էլ տրված է m տառով):

¹⁵ Նույն տեղում, էջ 62:

¹⁶ Н. В. Арутюнян, К интерпретации надписи на глиняной булле Кармир-блурз («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 227—228):

¹⁷ УПД, № 4, лс, տող 6; № 15, лс, տող 1 (որտեղ GEME բացահայտվել տառադարձության մեջ բաց է թողնված):

¹⁸ УПД, № 13, лс, տող 13, 14:

¹⁹ УПД, № 3, лс, տող 2:

²⁰ Նույն տեղում, էջ 52:

²¹ MEA, № 468:

²² А. Н. Зордаф, Античные монеты, М.—Л., 1951, էջ 24:

²³ Նույն տեղում, տախտակ 1, № 1:

5. MÍN.TUR «աղջիկ», «օրիորդ»²⁴, որը, սակայն, գուցե ավելի լավ կլինի տառադարձել որպես GEMEDUMU «դուստր», [որի վանկագիր տարբերակը, ամենայն հավանականությամբ, լինելու է GEMEse-la-a-l-e, տարբերակ՝ GEMEse-la-a-⟨l⟩-e²⁵ «գասաներն-իմ», GEMEse-la-a «գաստերը»²⁶) բառը], քանի որ ուրարտերենում կա համապատասխան LÚDUMU «որդի» բառը²⁷: Այս կապակցությամբ կարելի է հիշել հայերենի (Համշենի բարբառի) աղջիկ աղա «դուստր» և մեկ աղա «որդի» արտահայտությունները, որոնք վկայում են ուրարտացիների և հայերի լեզվամտածողության նմանությունը:

6. LÚMU կամ ավելի հիշտ՝ LÚMUHALDIM «խոհարար», «հացթուխ»²⁸:

7. LÚNA·KAID «ավագ հովիվ»²⁹:

8. LÚNÍG·ŠID «հաշվի մարդ»³⁰, ըստ երևույթին «հաշվապահ»:

9. LÚŠE·NUMUN «ցանքսի մարդ»³¹, որը կարող էր լինել թե՛ ազատ շինական և թե՛ պետական տնտեսության մեջ (առաջմ անհայտ կարգի) աշխատող³²:

10. LÚUR·ZÍR «շնապահ»³³, պաշտոն, որը գոյություն է ունեցել նաև խեթերի մոտ³⁴: Սակայն, ցանկալի էր տվյալ գաղափարագիրը տառադարձել UR·DÚR (աքքադ. kalbu) «շուն»³⁵ հիմքի վրա որպես LÚUR·DÚR «շնապահ»:

11. ZÍZ «տարեկան(?)» կամ «տարեկան», «հաճար»³⁶, որը առաջմ հնագիտական պեղումներից չի հայտնաբերվել³⁷: Մեր կարծիքով, հիշյալ դեպքում տվյալ գաղափարագիրը կարելի է դիտել նաև որպես ZIZ (աքքադ. kunašu «հաց», «հացահատիկ»³⁸, ինչպես այն ընդունված է առհասարակ:

Նորագյուտ արձանագրություններում մինչ այդ չվկայված գաղափարագրեր է հայտնաբերել նաև Ն. Հարությունյանը:

1. SÍG «բուրգ», «բրդյա»³⁹:

2. ŠĀ «սիրտ»⁴⁰, որը թերևս հայտնի է նաև վանկագիր tišnu ձևով⁴¹:

²⁴ УПД, № 4, лс, տող 7 և էջ 58, 93:

²⁵ УКН, № III, տող 1, 4 (որտեղ GEME=SAL, se=si, l=l): Հատվածի <l> հավելումը և թարգմանությունը մերն է:

²⁶ УПД, № 3, лс, տող 5 (որտեղ GEME բացահայտիչը տառադարձության մեջ ուղղված է i տառով):

²⁷ УКН, № 263, տող 11, 15, 16:

²⁸ УПД, № 3, лс, տող 3, 6 և էջ 52, 54, 93:

²⁹ УПД, № 4, лс, տող 4 և էջ 58, 93:

³⁰ УПД, № 2, лс, տող 3 և էջ 47, 93:

³¹ УПД, № 5, лс, տող 3 և էջ 64, № 7, лс, տող 3 և էջ 66, 93:

³² Նույն տեղում, էջ 64:

³³ УПД, № 12, лс, տող 14 և էջ 93:

³⁴ Նույն տեղում, էջ 81—82:

³⁵ МЕА, № 575:

³⁶ УПД, № 2, лс, տող 7 և էջ 49, 93:

³⁷ Նույն տեղում, էջ 49:

³⁸ МЕА, № 339:

³⁹ Н. В. Арутюнян, Новонайденная клинообразная таблетка из раскопок Кармир-блуга («Вестник древней истории», 1957, № 3, էջ 144—149)=УПД, № 10, лс, տող 4, 6:

⁴⁰ НУНКБ, № 1, տող 18 և էջ 28—30, 41:

⁴¹ Նույն տեղում, էջ 28:

3. PAMAR-UTU «Մարդուկ»⁴², որը ուրարտական տեքստերում հանդիպում է առաջին անգամ⁴³։ Այս հիշատակումը Կարմիր-ըլուրի արձանագրության մեջ, ըստ Ն. Հարությունյանի, պայմանավորված է նրանով, որ այնտեղ կար վերաբնակեցված բաբելական բնակչություն⁴⁴։

4. BANEŠ⁴⁵, չափի միավոր է և, սովորաբար, հանդես է գալիս վանկագիր kapl գրությամբ⁴⁶, ինչպես նկատել է իտալացի ուրարտագետ Մ. Սալվինի⁴⁷։

Ուրարտական արձանագրություններում հանդիպող գաղափարագրերը հաճախ ընթերցվում են ոչ այնքան ճիշտ և դիտվում որպես վանկագրեր։ Այդպիսի գաղափարագրերի վերծանման գործում իր ավանդն ունի Գ. Մելիքիշվիլին։

1. NÍG «սեփականություն», «պատկանելիություն»⁴⁸ (նախկինում ընթերցվել է šā)⁴⁹, որը, մեր կարծիքով, ամհրաժեշտ է դիտել որպես բայ՝ «պատկանում է» իմաստով, ելնելով կոնտեքստից և հատկապես անձնանվան տրական հոլովով տրված լինելուց։ Օրինակ՝ NÍG ¹Mi-nu-a⁵⁰ «Պատկանում է Մինուային» (ուղղական հոլովում a-ով վերջացող անձնանունները տրական հոլովում մնում են նույնը և ցուցիչ չեն ընդունում)։ Հետևաբար, նման բառերը պետք է դիտել տրական և ոչ թե սեռական հոլովով (ինչպես, սովորաբար, ենթադրվում է), քանի որ սեռական հոլովում նման վերջավորությամբ անձնանունները հանդես են գալիս i-ով)։ Օրինակ՝ NÍG ¹Ar-gi-iš-te_g-e⁵¹ «Պատկանում է Արգիշթին»։ NÍG ¹Du-sar₅-du-re-e⁵² «Պատկանում է Սարգուրին»։ Նման դեպքերում եթե անձնանունը վերջանում է i-ով, ապա այն անհրաժեշտ է տառադարձել le₄, այսինքն՝ դարձյալ տրական հոլովով և ոչ թե սեռական։ Օրինակ՝ NÍG ¹Du-sar₅-du-re-le₄⁵³ «Պատկանում է Սարգուրին»։

2. DU «անել», «կատարել», «կառուցել»⁵⁴, որը նախապես դիտվում էր որպես ni, կցվելով նախորդող, դեռևս չգիտակցված գաղափարագրին՝ šī-sī-ni⁵⁵ և կամ si-šī-né «երեք»⁵⁶։ Նույն գաղափարագրով ունենք նաև հետևյալ նախադասությունը։ DUMEŠ-le HÁ-e É-GALMEŠ GIBÍL-bé har-[ha-ar-šú-ú-bé]⁵⁷, այսինքն՝ «Կառուցե՛ք շատ (և) ամրոցներ այրեցի, ավերեցի»։ Այս

⁴² HУНКБ, № 3, տող 8 և էջ 61,

⁴³ Նույն տեղում, էջ 61, 63 (ծան. 44)։

⁴⁴ Նույն տեղում, էջ 96—97։

⁴⁵ HУНЭ, № 6, տող 9, 11, 12։

⁴⁶ HУНЭ, № 6, ծան. 6։

⁴⁷ M. Salvini, Nuove iscrizioni Urartee dagli scavi di Arin-berd, nell'Armenia Sovietica («Studi Micenei ed Egeo-Anatolici», fasc. nono, Roma, 1963), № 4, տող 9, 11, 12 և էջ 13։

⁴⁸ YKH, էջ 382։

⁴⁹ KB, II, էջ 55—56, 64, III, էջ 43—44 և այլուր։

⁵⁰ YKH, № 118b, տող 1 (որտեղ Mi=me) և այլուր։

⁵¹ YKH, № 152, տող 1 (որտեղ te_g=tl)։

⁵² YKH, № 260, տող 1 (որտեղ re=rl)։

⁵³ YKH, № 259c, տող 1 (որտեղ re=rl, le₄=l) և այլուր։

⁵⁴ Նույն տեղում, էջ 375։

⁵⁵ YKH, № 128, B1, ծան. 13։

⁵⁶ УПД, էջ 91։

⁵⁷ YKH, № 127, V, տող 79։

հանադասութիւնը ի. Դյակոնովի մոտ տրված է կրճատ և աղավաղված ձևով. DÛMEŠ-II te-a-e Ê·GALMEŠ, այսինքն՝ «Կառուցեցի մեծ ամրոցներ»⁵⁸, որը չի համապատասխանում իրականութիւնը:

3. GIŠGAGTI «նետ»⁵⁹, որն ավելի ճիշտ կլիներ տառադարձել GIŠGAG·TI, ինչպես այն տրված է ի. Դյակոնովի մոտ⁶⁰ և հանդիպում է սեպագրութիւն մեջ առհասարակ⁶¹:

Բավական մեծ թիվ են կազմում այն գաղափարագրերը, որոնք ճշտել և վերծանել է Ֆ. Քյոնիգը, Դրանցից են.

1. A·TU, սու կեղծ գաղափարագիր է⁶² և բխցվել է GA·TU ձևից⁶³, Հանդիպում է ha-ra-re a-tu ձևով⁶⁴, որն անհրաժեշտ է տառադարձել ha-ra-re A·TU⁶⁵: Տվյալ կապակցութիւնը այլ դեպքերում ամբողջութեամբ վերցրած հանդիպում է վանկագիր ձևով. [ha-ra-re t]e-ra-l-e⁶⁶ և կամ առանց նկատելի փոփոխութեան. ha-ra-re te-ra-l[è]⁶⁷, Հետևաբար, A·TU=teraJe «հաստատված (է)»:

2. TAR, նախապես տառադարձվել է որպես վանկագիր՝ tar-ni a-tu հատվածում⁶⁸: Այն անհրաժեշտ է ընթերցել TAR-né A·TU⁶⁹, քանի որ նույն դարձվածքը հանդիպում է նաև na-hi-di-né A·TU ձևով⁷⁰: Հետևաբար, TAR-né A·TU=naḫidine A·TU=naḫidine teraJe, այսինքն՝ «naḫide-ն հաստատված (է)»:

3. LUGAZ «մարտիկ»⁷¹, որը Գ. Մելիքիշվիլու մոտ բացակայում է⁷²:

4. HUN·GA «մարդ»⁷³, որը Գ. Մելիքիշվիլու մոտ տառադարձված է որպես KU [I]⁷⁴, թեև բացատրվում է, որ այդ գաղափարագիրն ամբողջութեամբ վերցրած նշանակելու է «տղամարդ»⁷⁵: Մեր կարծիքով, Ֆ. Քյոնիգի տառադարձումը թեև ճիշտ է, բայց թարգմանութիւնը տրված է ոչ այնքան հաջող, որովհետև LUHUN·GÁ (աքքադ. agru) գաղափարագիրը նշանակում է «վարձկան»⁷⁶: Եվ քանի որ այս արտահայտութիւնը նախորդում է

⁵⁸ И. М. Дьяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков («Переднеазийский сборник», I, М., 1961) (այսուհետև՝ СГО), էջ 378, ծան. 2:

⁵⁹ УКН, էջ 376:

⁶⁰ И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике, II («Эпиграфика Востока», VI, М.—Л., 1952, էջ 107):

⁶¹ MEA, № 230:

⁶² HChI, էջ 176:

⁶³ նույն տեղում, էջ 220:

⁶⁴ УКН, № 155, E, տող 57 (որտեղ re=ri):

⁶⁵ HChI, № 103, § 9, VI (որտեղ re=ri):

⁶⁶ УКН, № 155, C, տող 55=HChI, № 103, § 5, II (որտեղ re=ri, լ=i):

⁶⁷ УКН, № 264, ут, տող 32=HChI, № 122, § 15 (որտեղ re=ri, լe=gi):

⁶⁸ УКН, № 155, D, տող 53:

⁶⁹ HChI, № 103, § 12, II (որտեղ ne=ni):

⁷⁰ HChI, № 103, § 14, VIII (որտեղ ne=ni):

⁷¹ HChI, № 7, V:

⁷² УКН, № 24, лс, տող 22:

⁷³ HChI, № 6, VIII և էջ 186:

⁷⁴ УКН, № 20, лс, տող 38, ос, տող 15:

⁷⁵ УКН, № 20, ծան. 11:

⁷⁶ MEA, № 536:

nunabe ištīnine «եկավ այնտեղից» կապակցությունը⁷⁷, ապա պարզ է, որ հիշյալ վարձկանները՝ թվով մի քանի հազար մարդ⁷⁸, եկել են Իշպուինեի և Մինուայի կողմից գրավված Անաշե (URU Anaše)⁷⁹ քաղաքից, Հետեաբար, մ. թ. ա. IX դ. վերջերին, մոտավորապես 810 թ., ուրարտական բանակում եղել են վարձկաններ։ Ուստի, ուրարտական բանակում վարձկանների գոյության մասին Գ. Ղափանցյանի ունեցած թեմական կարծիքն⁸⁰ այս փաստով հաստատվում է։

5. ITU «ամիս» գաղափարագիրը, որ հայտնի է նաև այլ արձանագրություններից, Սարգուրե II-ի Գանձադուան տարեգրության մեջ Գ. Մեիլիքիշվիլու մոտ տառադարձված է ERUM (իմա՝ ERÈ) «ստորուկ» (III ME XXXVI ERUMMEŠ, այսինքն՝ «336 ստորուկ»)՝⁸¹ Արձանագրության լուսանկարի⁸² ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Յ. Քյոնիգը իրավացի է, երբ այնտեղ կարդում է 3 ME 36 ITUMMEŠ, այսինքն՝ «336 ամսում»⁸³ և եզրակացնում, որ այդ բոլորը կազմում է 28 տարի⁸⁴, այսինքն՝ նշված է Սարգուրե II-ի գահակալության տարիների թիվը։ Եվ, իրոք, Ուրարտուի արքայի գահակալության ընդունված թվականները՝ մ. թ. ա. 764—735 թթ., փաստորեն, կազմում են 29 տարի, Հետեաբար, Սարգուրե II-ի Գանձադուան տարեգրությունը գրվել է նրա գահակալության 28-րդ տարում (մ. թ. ա. 736 թ.)։

6. MA.NA, քաղի միավոր, որը հավասար է 505 գրամի⁸⁵, Հանդիպում է ինչպես MA.NA, այնպես էլ MA.NA-e ձևով⁸⁶, այսինքն՝ հնչյունային լրացմամբ, որը Գ. Մեիլիքիշվիլու մոտ տառադարձված է վանկային առումով՝ ma-na և ma-na-e ձևերով⁸⁷։

Ուրարտերենի չգիտակցված գաղափարագրերի վերծանման և սխալ ընթերցված գաղափարագրերի ճշտման գործում մեծ վաստակ ունի Ի. Դյակոնովը։

1. LÚĒ.TIN «գինեգործ(?)»⁸⁸, նախապես տառադարձվել է LÚú-din, LÚú-tin⁸⁹, որը կրկնվել է նույնությամբ⁹⁰ կամ միայն LÚú-din ձևով⁹¹։

⁷⁷ УКН, № 20, лс, տող 34, օс, տող 14։

⁷⁸ УКН, № 20, лс, տող 33, օс, տող 14—15։

⁷⁹ УКН, № 20, лс, տող 33, օс, տող 14 և տվյալը։

⁸⁰ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940 (այսուհետև՝ Ո.Պ.), էջ 97, 119։

⁸¹ УКН, № 155, G, տող 11։

⁸² Н. Я. Марр, И. А. Орбели, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петроград. 1922, աղյուսակ XIV։

⁸³ HChI, № 103, A, III և էջ 119։

⁸⁴ Նույն տեղում, էջ 119, ծան. 10։

⁸⁵ MEA, № 342։

⁸⁶ HChI, էջ 123։

⁸⁷ УКН, էջ 401։

⁸⁸ УПД, № 1, лс, տող 4, № 12, օс, տող 4 և էջ 42, 83, 93։

⁸⁹ Ն. Վ. Հարությունյան, Կարմիր-բլուրի նորագյուտ սեպագիր աղյուսակը («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 201—213)։

⁹⁰ Н. В. Арутюнян, Новая клинописная табличка из раскопок Кармир-блур (Festschrift Johannes Friedrich, Heidelberg, 1959, էջ 35, 51)։

⁹¹ Զ. Զ. Կարապետյան, Սարգուրե III-ի հրամանագիրը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1960, № 10, էջ 80)։

2. LUNA·DIB «կնիք պահող»⁹², հավանաբար, բարձրաստիճան պաշտոնյա, այն է՝ «արքայական տնտեսության անձնակազմի պետ»⁹³, որը նախապես տառադարձվել և թարգմանվել է LUZA·[L·[M·MA?]] «քարզործ վարպետ»⁹⁴ կամ «քարտաշ»⁹⁵:

3. BABBAR «սպիտակ»⁹⁶, նախապես ընթերցվել է UD «օր»⁹⁷:

4. GAR «տիրակալ»⁹⁸, որը նախապես տառադարձվել է ՏՁ վանկով. LUGAL a-le<...> ša-u-e ma-nu-le⁹⁹: Այժմ կարելի է կարդալ. LUGAL a-le<...> GAR-ū-e ma-nu-le և թարգմանել. «(Մի) արքա, երբ <...> տիրակալ լինի»: Ընդ որում, թեև ՏՁ վանկագիրը Ի. Դյակոնովը, իրավամբ, կարդում է GAR, բայց GAR-ū-e ձևը, փաստորեն, դիտում է հոգնակի թվի սեռական կամ տրական հոլովով տրված բառ¹⁰⁰: Մեր կարծիքով, դա այդպես չէ, քանի որ GAR-ū-e կիսագաղափարագիր-կիսավանկագիր բառի տակ թաքնված է ուրարտերենում հանդիպող a-la-ú(?)·e(?), այսինքն alaye «իշխան» բառը¹⁰¹, որը ածանցված և հոլովված ձևով հայտնի է նաև որպես ածական՝ alayine «իշխանական» (a-la-ū-i-ni-ne al-su-i-ši-ne¹⁰², այսինքն՝ «իշխանական մեծություն»¹⁰³): Սույն alaye բառը (ամենայն հավանականությունով հնչել է alayə) հետագայում, եթե պահպանվեր հայերենում, հավանաբար, հանդես էր գալու որպես «ալալ» «իշխան» կամ «ալալիկ» «իշխանիկ» ձևով, որի սեռականը կլիներ «ալալայ» «իշխանիկի»: Բարեբախտաբար, այս վերջին ձևը XII դ. սկզբին հանդիպում է որպես անձնանուն՝ Դալիթ ուղի Ալալայ¹⁰⁴: Հետևաբար, հայերենի Ալալիկ անձնանունը ծագում է ոչ թե պարսկերենի alāw (آلاو) «բոց», «հուր» բառից, ինչպես հարցականի տակ ենթադրում է Հ. Աճառյանը¹⁰⁵, այլ ուրարտերենի alaye «իշխան» բառից և նշանակում է «իշխանիկ»:

Այս կապակցությամբ կարելի է հիշել Ալուզ իշխանի անունը («մեծաշուք և տիեզերակալ իշխանաց իշխանին Ալուզի, որ էր տէր և իշխեցող գաւառացն Մաղկուտան և Կոզովտի և մեծ աւանին Անգեղտանն»)¹⁰⁶, որը թեև Հ. Աճառյանի կարծիքով համարվում է անհայտ ծագմամբ անձնանուն¹⁰⁷, սակայն,

⁹² УПД, № 1, лс, տող 10 և էջ 44, ծան. 9, № 2, лс, տող 3 և էջ 47, № 4, лс, տող 3 և էջ 57, № 6, лс, տող 3 և էջ 65:

⁹³ Նույն տեղում, էջ 93:

⁹⁴ Ն. Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 201—213:

⁹⁵ Հ. Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 81, 85:

⁹⁶ УПД, № 13, лс, տող 7:

⁹⁷ УКН, № 326, лс, տող 7:

⁹⁸ УПД, էջ 67:

⁹⁹ УКН, № 167, տող 5 (որտեղ le=li) և այլուր:

¹⁰⁰ УПД, էջ 60, 67, 71 (ծան. 94):

¹⁰¹ УКН, № 276, лс, տող 20 (որտեղ ú=ü):

¹⁰² УКН, № 155, E, տող 6, 46 (որտեղ ú=ü, ne=ni):

¹⁰³ УПД, էջ 60:

¹⁰⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատությամբ Կ. Ա. Մե-լիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 116, 199 և այլուր:

¹⁰⁵ Հ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, I, Երևան, 1942, էջ 73:

¹⁰⁶ Քոլիմաի վարդապետի Արժրուհույ Պատմություն տանն Արժրուհեաց, Քիֆլիս, 1917, էջ 593:

¹⁰⁷ Հ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 84:

Մ. Իսրայելյանի դիտողությունների համաձայն¹⁰⁸ նույնպես ծագում է ուրարտերենից՝ *aluse* «տեր», «իշխան»¹⁰⁹ բառից:

Ն. DIŠKUR «Թեյշեբա», որի տակ տվյալ դեպքում անհրաժեշտ է հասկանալ Թեյշեբին քաղաքի (Երևանի հարավ-արևմտյան մասում գտնվող Կարմիր-բլուրի ամրոցի) անունը. DIŠKUR URU-e, այսինքն՝ «Թեյշեբայի քաղաքին»¹¹⁰, մեր կարծիքով, «Թեյշեբին քաղաքին»: Նախկին ընթերցումը պարզապես ճիշտ չէ. D'A URU-e, այսինքն՝ «'Ա աստծու քաղաքին»¹¹¹, որը նախ տեղորոշվել է Արմավիրի¹¹², ապա Կարմիր-բլուրի շրջակայքում¹¹³: Միաժամանակ ենթադրվել է, որ կարծեցյալ D'A աստվածը և ուրարտական դիցարանի DUa աստվածությունը¹¹⁴ նույնն են և նախորդի անունը իբր ծագում է այս վերջինից¹¹⁵:

Զգիտակցված գաղափարագրերի վերծանման ասպարեզում ճշտումներ է կատարել նաև Ն. Հարությունյանը: Այսպես.

1. GÍR, տառադարձում է Արծկեում (Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին) հայտնաբերված մի արձանագրության մեջ¹¹⁶ և վերականգնում Կարմիր-բլուրում գտնված համանման մի տեքստի շարված մասում¹¹⁷, որը նախապես ընթերցվել էր *gi*՝ վանկով¹¹⁸, Ն. Հարությունյանը հիշյալ ուղղումը, հավանաբար, կատարել է Ի. Դյակոնովի կազմած վանկարանի համապատասխան GÍR գաղափարագրի¹¹⁹ հիման վրա, սակայն, չի թարգմանել: Այն չի թարգմանված նաև Գ. Մելիքիշվիլու մոտ¹²⁰, Բայց հայտնի է, որ GÍR (աք-քադ. *paṭru*) գաղափարագիրը նշանակում է «թուր»¹²¹:

2. LÚŠÁ·RÊŠÍ «ներքինի»¹²², Մեր կարծիքով պետք է կարդալ LÚNÍG·SAG, որը, հավանաբար, LUNÍG·SAG·ÍL·LA (աքքադ. *dinanu, puḫu, nisag!lu*) «տեղակալ» գաղափարագրի¹²³ կրճատված ձևն է՝ իմաստի որոշակի փոփոխությամբ. այն է՝ «ծառա(?)»: Ի. Դյակոնովը կարդում է LÚa-nu-pa¹²⁴, թեև LÚŠÁ·RÊŠÍ «ներքինի» գաղափարագիրը ուրարտական արձանագրություններում առաջին անգամ վերծանել է հենց ինքը¹²⁵, Միայն թույլ է

108 Մ. Ա. Իսրայելյան, Արուզ անվան ստուգաբանությունը (Երևանի պետական համալսարանի Ն. Մադի անվան կաթինետի «Աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 211—214):

109 ՄԿԽ, էջ 388:

110 УПД, № 10, лс, տող 1:

111 Н. В. Арутюнян, Новонайденная клинописная таблетка из раскопок Кармир-блур («Вестник древней истории», 1957, № 3 (էջ 144—149) և այլուր:

112 Նույն տեղում, էջ 149 և այլուր:

113 НУНКБ, էջ 83:

114 ՄԿԽ, № 27, տող 6, 38:

115 НУНКБ, էջ 83—84 և այլուր:

116 НУНКБ, № 5, տող 8:

117 НУНКБ, № 2, տող 11:

118 P. Hulin, New Urartian Inscriptions from Adilcevaz («Anatolian Studies», IX, London, 1959), № 1, տող 8:

119 УПД, էջ 97:

120 ՄԿԽ, № 451, տող 8:

121 MEA, № 10:

122 Н. В. Арутюнян, Бнайнили (Урарту). Ереван, 1970, էջ 355, ծան. 105:

123 MEA, № 597:

124 УПД, № 7, лс, տող 12:

125 УПД, № 12, лс, տող 10, օս, տող 2:

տրվել շատ պարզ պատճառով: Հիշյալ LUa hu-pa ենթադրյալ բառի մեջ ա վանկը գրված է մոտավորապես այնպես, ինչպես այն գրվում է կավի սա- լիկների վրա՝ միայն երկու սեպով: Սակայն, ա վանկը գրվում է մեկ երկար և նրա վրա՝ աջից և մի քիչ ցածրից դրոշմված կարճ սեպով¹²⁶ (որի մասին մենք առիթ ենք ունեցել խոսելու սեպագրության մեջ առաջին անգամ հանդիպող u+e լիգատուրան վերծանելիս)¹²⁷, այնինչ տվյալ դեպքում մեկ լայն սեպ վերևում է (փաստորեն երեք ուղղահայաց փոքր սեպերի փոխարեն) և մեկ փոքր ուղղահայաց սեպ ներքևում¹²⁸, Ուստի, այն ճձ վանկն է և կարող է կարդացվել նաև ՏՁ (կամ մեր ընթերցմամբ NIG): Վերջին hu-pa վանկերը ես անհրաժեշտ է դիտել ոչ թե որպես երկու առանձին վանկեր, այլ միասին, որով և կստացվի REŠU (մեր ընթերցմամբ SAG): Հետևաբար, LUŠA·REŠI «ներքինի» կամ մեր ընթերցմամբ՝ LUNIG·SAG «ծառա(?)»:

Զգիտակցված գաղափարագրերի վերծանման մեջ իր ավանդն ունի նաև Մ. Իսրայելյանը: Հիշատակենք հետևյալները.

1. ŠALMU «արձան»¹²⁹, որը նախապես տառադարձվել էր որպես վան- կադիր nu (nu-ni)¹³⁰: Սակայն, šalmu «արձան» բառը աքքադերեն է և որպես գաղափարագիր ուրարտերենում ընդունելի չէ: Ցանկալի էր այն տառադար- ձել ընդունված շումերական ձևով NU (աքքադ. šalmu) «արձան»¹³¹:

2. ENGUR «ծով», «օվկիան», «չրային անհունություն»¹³², որը վնասված լինելու պատճառով նախապես ընթերցվել է Դ INGI¹³³: Հանդես է գալիս որ- պես sue «ծով» բառով¹³⁴ կազմված բարդության բացահայտիչ:

3. GIŠNA₅ -e-i¹³⁵, նախապես տառադարձվել էր GIŠša-e-i վանկազրե- րով¹³⁶: Մեր կարծիքով, եթե Մ. Իսրայելյանի առաջարկած տառադարձությու- նը ճիշտ է, ապա նրա թարգմանությունը որպես «հատուցում», բառացի՝ «արձագանքող»¹³⁷, այնքան էլ ընդունելի չէ, քանի որ GIŠNA₅ (աքքադ. piṭnu) նշանակում է «թմբուկ»¹³⁸, Ուստի, GIŠNA₅ -e-i ձևը կլինի գոյական- նակերտ ածական, այսինքն՝ «թմբկային», «թմբկաձև»: Եվ եթե նկատի ունե- նանք այն հանգամանքը, որ արձանագրությունը փորագրված է թմբկաձև պատվանդանի վրա¹³⁹, ապա ամեն ինչ պարզ կդառնա: Մեր կարծիքով, ամ-

¹²⁶ УПД, № 1, лс, տող 2, 3, 8, 10 և այլուր:

¹²⁷ 2. 2. Կարագյոզյան, նշվ. աշխ., էջ 80:

¹²⁸ УПД, էջ 131, լուսանկար:

¹²⁹ Մ. Ա. Իսրայելյան, Մի անհայտ սեպագիր արձանագրություն (ՀՍՍՌ ԳԱ «Տե- ղեկագիր», 1981, № 12, էջ 42, 43):

¹³⁰ УКН, № 99, лс, տող 2:

¹³¹ МЕА, № 75.

¹³² Մ. Ա. Իսրայելյան, Ուրարտագիտական դիտողություններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրա- բեր», 1970, № 3, էջ 83):

¹³³ УКН, № 27, տող 19, 84:

¹³⁴ ՈւՊ, էջ 39:

¹³⁵ Մ. Ա. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971 (ալ- սուհետև՝ էՔՔՊ), էջ 70, 184:

¹³⁶ Б. Б. Пиотровский, Урартская надпись из раскопок Кармир-блур, свя- занная с основанием Эребуни («Эпиграфика Востока», XVII, М.—Л., 1966, էջ 5):

¹³⁷ էՔՔՊ, էջ 70, 184:

¹³⁸ МЕА, № 353.

¹³⁹ Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 3:

բողջ արձանագրության տառադարձումը և թարգմանությունը այսպիսին է. DHal-de-e EN·ŠÚ i-né i-si-qe GIŠNA₃ -e-i 'Ar-gi-lš-tl-i-šē 'Mì-nu-a-ḫi-nē-še za-du-ne i-ú URUEr-<e>-bu-ni-ne šl-di-lš-tū-ū-ne, այսինքն՝ «Խալդե տիրոշն-իր այս պատվանդանը թմբկաձև Արգիշթե Մինուայորդին սարքեց, երբ Երեբունեն կառուցեց»:

Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ տվյալ պատվանդանի վրա կանգնեցված է եղել աստծու կամ արքայի արձանիկ¹⁴⁰, Կ. Հովհաննիսյանը, հակառակ այս միանգամայն հնարավոր ենթադրության, գտնում է, որ նորաստեղծ քաղաք-ամրոցը խորհրդանշվում է ոչ թե աստծու կամ թագավորի կերպարով... այլ հասարակ շարքային զինվորի արձանիկով¹⁴¹, այսինքն՝ հիշյալ բրոնզե պատվանդանի վրա կանգնեցված է եղել զինվորի արձանիկ: Այս տեսակետն, իրավամբ, մերժել է Մ. Իսրայելյանը¹⁴², Կ. Հովհաննիսյանը վերջերս վերանայեց իր նախկին տեսակետը և գտավ, որ հիշյալ բրոնզե պատվանդանի վրա կանգնեցված է եղել աստծու հնամենի արձանիկ՝ զինվորի տեսքով¹⁴³, Մ. Իսրայելյանը ևս իր հերթին առաջ է քաշում ոչ այնքան ընդունելի տեսակետ, ենթադրելով, որ հիշյալ բրոնզե պատվանդանը թիր վրա կրել է ցուլը խորհրդանշող եղջյուր¹⁴⁴: Սակայն, արձանագրության մեջ ամեն ինչ ասված է շատ պարզ՝ թմբկաձև պատվանդանը պատրաստված է եղել Խալդե աստծու (այսինքն՝ նրա արձանիկի) համար:

Մ. Իսրայելյանի հաշվումներով (այդ մասին նա մեզ տեղեկացրել է մանրամասն) դեռևս չվերծանված ուրարտական գաղափարագրերի թիվը հասնում է մոտ քսանի, որոնք մոտ ապագայում կներկայացվեն հրատարակության: Այնուամենայնիվ, դրանցից բացի, մեզ հաշողվեց վերծանել ավելի քան հիսուն գաղափարագիր, որոնցից այստեղ կներկայացնենք մի քանիսը:

Իշպուինեի (825—810 թթ. մ. թ. ա.) և Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.) հառակոնիսում հայտնաբերված արձանագրության հատվածներից մեկում Գ. Մելիթիլիին, վերականգնումներով հանդերձ, կարդում է. [1]-ú Ê·GALMES āš-ú-[la-a-ni]¹⁴⁵, որը նույն արձանագրության մի այլ հատվածում հանդիպում է ավելի քիչ վնասվածքներով. [1]-ú Ê·GALMES āš-ú-la-a-n[1]¹⁴⁶, Երկու դեպքում էլ թարգմանությունը հետևյալն է. «Երբ նրանք թողնում էին (նվաճված) ամրոցները»¹⁴⁷:

Հիշյալ երկու հատվածները միասին Ֆ. Քյոնիգը տառադարձում է այսպես. [1]-ú Ê·GALMES āš-ú-[1]a-a-[1]¹⁴⁸ և թարգմանում՝ «Երբ ամրոցները ընկան»¹⁴⁹:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 5:

¹⁴¹ Կ. Լ. Հովհաննիսյան, էրեբունի, Երևան, 1968, էջ 30:

¹⁴² ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 9, էջ 90:

¹⁴³ Կ. Լ. Հովհաննիսյան, էրեբունիի որմնաձևարները, Երևան, 1973, էջ 8:

¹⁴⁴ էՔՔՊ, էջ 70:

¹⁴⁵ YKH, № 24, ա, տող 28:

¹⁴⁶ YKH, № 24, ա, տող 35:

¹⁴⁷ YKH, էջ 140, 141:

¹⁴⁸ HChI, № 7, VI.

¹⁴⁹ HChI, էջ 41:

Արձանագրության լուսանկարի¹⁵⁰ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գ. Մելիթիշվիլու վերականգնած ռ[ի] սեպախումբն ավելի հավանական է, քան Ֆ. Քյոնիգի լ[ի] ընթերցումը: Հետևաբար, թեև քերականական առումով Ֆ. Քյոնիգի թարգմանությունը (asulali-ն որպես չեզոք սեռի բայ) ճիշտ է, բայց տառադարձությունը ստույգ չլինելու պատճառով ընդունելի չէ: Եվ, ընդհակառակը, Գ. Մելիթիշվիլու տառադարձությունը թեև ավելի հավանական, սակայն, թարգմանությունը հավանական լինել չի կարող, քանի որ ուրարտերենում սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակի հոգնակի թվի երրորդ դեմքում ներգործական սեռի բայերը հանդես են գալիս ոչ թե -ulani, ինչպես տվյալ դեպքում է, այլ՝ -īale վերջավորությամբ: Օրինակ՝ hašu- «լսել»¹⁵¹, *hašiale «լսում էին», որը վկայված է ha-ši-al-me DINGIRMES կապակցությամբ¹⁵² և նշանակում է «լսում-էին-ինձ աստվածները»: Հետևաբար, Գ. Մելիթիշվիլու թարգմանությունը ևս վերջնական չէ:

Բարեբախտաբար, քննվող հատվածները գրեթե նույնությամբ հանդիպում են Սարգուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.) Գանձադառն տարեգրության մեջ. i-ú KURE-ba-ni ās-ū-la-a-bi¹⁵³ կամ i-ú KUR-ni-i ās-ū-la-bi¹⁵⁴, որը երկու դեպքում էլ թարգմանված է «Երբ (նվաճված) երկիրը ես թողնում էի(?)»¹⁵⁵: Նշենք, որ եթե առաջին դեպքում KURE-ba-ni բառը հնարավոր է գիտել որպես ուղղական հոլովով տրված ուղիղ խնդիր, ապա ստորոգյալը (ās-ū-la-a-bi) պետք է հանդես գա իբրև ներգործական սեռի բայ, այնինչ իր կազմությամբ այն չեզոք սեռի բայ է, այն էլ ոչ թե սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակի եզակի թվի առաջին դեմքով, ինչպես ներկայացված է, այլ անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքով: Հետևաբար, թարգմանությունը ճիշտ չէ:

Այնուհետև, եթե առաջին դեպքում վկայված KURE-ba-ni բառը կարող է թվալ ուղղական հոլովով տրված, ապա երկրորդ դեպքում առկա KUR-ni-i ձևը անառարկելիորեն սեռական հոլովով է: Ուստի, այն ոչ թե ուղիղ խնդիր է, այլ հատկացուցիչ: Հետևաբար, թարգմանությունը դարձյալ ճիշտ չէ:

Այսպիսով, ստացվում է մի նախադասություն, որտեղ եթե կա հատկացուցիչ, ապա գոյություն չունի հատկացյալ, եթե կա չեզոք սեռի բայ, ապա բացակայում է ենթական:

Հիշյալ հատվածները Ֆ. Քյոնիգի մոտ տրված են նույնությամբ (եթե չհաշվենք āš վանկի՝ նրա մոտ հանդիպող հին ուղղագրությամբ āš տառադարձումը)¹⁵⁶, սակայն, թարգմանված են մի քիչ այլ ձևով. «Երբ երկիրը թալանվեց»¹⁵⁷: Այնուամենայնիվ, այս թարգմանությունը ևս քննության չի դիմանում, քանի որ āšulabi ենթադրյալ բայը տրված է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ դեմքով, սակայն ոչ

¹⁵⁰ C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum chaldicarum, Berlin und Leipzig, I—II, 1928—1935 (այսուհետև՝ CICH), աղյուսակ XLIV.

¹⁵¹ YKH, էջ 396.

¹⁵² YKH, № 127, II, տող 10 և այլուր:

¹⁵³ YKH, № 155, A, տող 12:

¹⁵⁴ YKH, № 155, C, տող 46:

¹⁵⁵ YKH, էջ 275, 280.

¹⁵⁶ HChI, № 103, § 16, VI, § 4, IX.

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 129, 121:

թե կրավորական առումով, ինչպես ներկայացված է, այլ չեզոք: Ուստի, թարգմանությունը նույնպես ճիշտ համարվել չի կարող:

Մեր կարծիքով, ամրող զաղտնիքը կարծեցյալ $a\check{s}-u-la-a-bi$ բայի մեջ է: Ուրարտեանի սեպագիր գրություն մեջ նման անցումներ ($\check{a}\check{s}-u$ և այլն) չկան, այլ կան միայն վանկային անցումներ ($\check{a}-\check{s}u$ և այլն), որի մասին մենք մի այլ առիթով խոսել ենք¹⁵⁸: Հենց այդ պատճառով էլ հիշյալ բայի առաջին վանկը, որ տառադարձվում է $\check{a}\check{s}$, պետք է դիտել ոչ թե վանկագիր, այլ գաղափարագիր՝ $Z[Z$ (աքքադ. $kunāšu$), «հաց», «հացահատիկ»¹⁵⁹, որի մասին խոսք եղավ վերևում: Հետևաբար, քննարկվող երկու հատվածները անհրաժեշտ է տառադարձել և թարգմանել հետևյալ կերպ. $1-u KUR-ba-ni Z[Z u-la-a-bé$ և $1-u KUR-ni-l Z[Z u-la-bé$, այսինքն՝ «ծրբ երկրի հացը (=հասույթը) գնաց»:

Վերահիշյալ հատվածները ևս, որ տառադարձվել են $[1]-u \check{E}.GALME\check{S} \check{a}\check{s}-u-la-a-n[1]$ կամ $[1]-u \check{E}.GALME\check{S} \check{a}\check{s}-u-[1]a-a-l[1]$ ձևերով, անհրաժեշտաբար պետք է տառադարձվեն և թարգմանվեն համանման ձևով, այն է՝ $[1]-u \check{E}.GALME\check{S} Z[Z u-la-a-b[e]$, այսինքն՝ «ծրբ ամրոցի հացը (=հասույթը) գնաց», որտեղ $\check{E}.GALME\check{S}$ գաղափարագրի վերջում նշված հոգնակիության ցուցիչը պարզապես ավելորդ է, ինչպես այն պատահում է շատ հաճախ, քանի որ տվյալ դեպքում խոսքը Ուրմիա լճի հարավային կամ հարավ-արևելյան ափերի մոտակայքում գտնվող Մեշտա քաղաքի ($u\check{s}-ta-a-le URUMe-e-e\check{s}_{17}-\check{a}-a-e-d[e]$ ¹⁶⁰, այսինքն՝ «արշավեցին Մեշտայի-վրա») գրավման մասին է և ոչ թե ինչ-որ ամրոցների:

Արգիշթե 1-ի (786—764 թթ. մ. թ. ա.) խորխորայն տարեգրության հատվածներից մեկում, ըստ Գ. Մելիքիշվիլու կարդացվում է $[u\check{s}-ta-d]i URUId [...]$ $ku[...]$ $a-u-ni-e-di$ կապակցությունը¹⁶¹, որը նա թարգմանում է հետևյալ կերպ. «ծլա ես (արշավանքի)... քաղաքի վրա»¹⁶²:

Ն. Հարությունյանը այնտեղ կարդում է. $[u\check{s}-ta]-di \check{A}LUId[...]$ $ku[...]$ $a-u-ni-e-di$ ¹⁶³ և թարգմանում. «ծս- $[ուղևորվեցի]$ դեպի Իդ $[...]$ քու $[...]$ աու (քաղաքը)»¹⁶⁴:

Ֆ. Քյոնիգը հիշյալ հատվածը կարդում է այսպես. $[us-ta-d]i URUIt-k[u?-x]-a-u-ni-e-di$ ¹⁶⁵, և թարգմանում. «ծս դուրս եկա Իթք $[ու. 1-աուների (քաղաքի) դեմ]$ »¹⁶⁶: Անհրաժեշտ է նկատել, սակայն, որ եթե Ֆ. Քյոնիգը հիշյալ հատվածի համապատասխան տեղում օգտագործում է URU «քաղաք» բացահայտիչը, որը առկա է նաև նրա կատարած ընդօրինակության մեջ¹⁶⁷, ապա բառարանում այն սխալմամբ տրված է որպես KUR «երկիր»¹⁶⁸:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ սեպագիրի URU ըն-

¹⁵⁸ Հ. Հ. Կարազյուլյան, Սեպագիր աղբյուրների Ալիա քաղաքը (ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր», 1975, № 4, էջ 92):

¹⁵⁹ MEA, № 339.

¹⁶⁰ YKH, № 21. лс, տող 10 և այլուր (որտեղ $le=li$, $e\check{s}_{17}=is$, $ta=ta$, $de=di$):

¹⁶¹ YKH, № 127, 1, տող 29:

¹⁶² Նույն տեղում, էջ 212:

¹⁶³ Н. В. Арутюнян, Хорхорская летопись Аргишти I («Эпиграфика Востока», VII, М., 1953, էջ 90):

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 91:

¹⁶⁵ HChI, № 80, § 2, VI.

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 88:

¹⁶⁷ Նույն տեղում, աղյուսակ 52:

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 189:

թերցումը դալիս է Ֆ. Շուլցի ոչ այնքան ճիշտ ընդօրինակությունից, որտեղ այն սխալմամբ տրված է URU ձևով¹⁶⁹։ Դատելով տարեգրության պատճենահանված օրինակի լուսանկարից¹⁷⁰, ասենք, որ տվյալ սեպարմրի URU ընթերցումը պարզապես թյուրիմացության արդյունք է, որովհետև պարզ երևում է GI₄ (աքքադ. târu) «վերադառնալ»¹⁷¹ գաղափարագիրը, միայն մի փոքր հապավված ձևով՝ վերջին ի սեպարմրի հիշեցնող հատվածի բացթողումով։

Մեր կարծիքով, Ռուսա I-ի (735—714 թթ. մ. թ. ա.) արձանագրություններից մեկում, որտեղ կարդում են KUR-ni-[e-di] iš-te-di կապակցությունը¹⁷², նույնպես օգտագործված է հիշյալ GI₄ գաղափարագիրը, սակայն, լրիվ ձևով, որը սխալմամբ ընդօրինակված է iš և te վանկագրերով¹⁷³։ Մեր այս կարծիքը կարելի է հիմնավորել նրանով, որ ištedi (իմա՝ ištēde) բառը ոչ թե չեզոք սեռի բայ է, ինչպես պահանջվում է տվյալ դեպքում, այլ եզակի թվի ուղևորական հոլովով տրված տեղի մակբայ՝ «դեպի-այնտեղ», ինչպես այն վկայված է մի քանի անգամ։ Օրինակ՝ iš-te₈-e-d[e] uš-ta-d[e] KURMa-na-i-d[e]¹⁷⁴, «Դեպի-այնտեղ արշավեցի՝ Մանայի-վրա»։ iš-te-e-de uš-ta-a-d[e] KURPu-lu-a-de-e-de¹⁷⁵, «Դեպի-այնտեղ արշավեցի՝ Պուլուադեի-վրա»։ iš-te-de uš-ta-de KURQu-ma-ha-ha-ll-ne-[e] KURē-ba-ne-e-de¹⁷⁶, «Դեպի-այնտեղ արշավեցի՝ Կումախախլան երկրի-վրա»։ Ընդ որում, Գ. Մելիքիշվիլին երեք դեպքում էլ ištēde բառը թարգմանում է «ուղևորվեցի»¹⁷⁷, սակայն, չեզոք սեռի բայերը ուրարտերենում անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքում, որպես կանոն, ունենում են -ade, բայց ոչ երբեք -ede վերջավորություն, իսկ կրավորական սեռի բայեր ուրարտերենում առհասարակ չկան։ Հետևաբար, հիշյալ հատվածում, վերականգնումներով հանդերձ, կարելի է կարդալ. KUR-ni-[ú-ke-de] GI₄-a]-de, այսինքն՝ «երկիրս վերադարձա», որտեղ GI₄-a]-de ձևը փոխարինում է bidiade «վերադարձա» (բառացի՝ «վերադառնում-էի») բային (որի արմատն է bid- և նշանակում է «վերադառնալ», «վերադարձնել»)՝ մանավանդ որ արձանագրության ասուրական կրկնօրինակի համապատասխան հատվածում ասված է. ana mâtī-ia e-ru-bu¹⁷⁸, այսինքն՝ «երկիրս վերադարձա», բառացի՝ «երկիրս մտա»։

Եթե ճիշտ են մեր դիտողությունները կարծեցյալ URU բացահայտիչը գաղափարագիր GI₄ ընթերցելու վերաբերյալ, ապա քննարկվող հատվածի id սեպարմրի ևս իր հերթին ընթերցվելու է ոչ թե որպես վանկագիր id, այլ գաղափարագիր՝ Á (աքքադ. emuqu) «ուժ», «զորություն»¹⁸⁰։

¹⁶⁹ F. E. Schulz. Mémoires sur le lac de Van et ses environs («Journal Asiatique», IX, Paris, 1840) (ալսուհետև՝ MLV), աղյուսակ II։

¹⁷⁰ YKH, լուսանկար 28։

¹⁷¹ MEA, № 326։

¹⁷² YKH, № 284, տ. 2, տող 24։

¹⁷³ C. F. Lehmann-[Haupt], Zwei unveröffentlichte chaldäische Inschriften, («Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, 58. Band, Leipzig, 1904, էջ 835)։

¹⁷⁴ YKH, № 155, B, տող 13—14 (որտեղ te₈=tl, de=dl)։

¹⁷⁵ YKH, № 155, E, տող 8—9 (որտեղ de=dl)։

¹⁷⁶ YKH, № 155, E, տող 48—49 (որտեղ de=dl, né=nl)։

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 277, 278։

¹⁷⁸ YPD, էջ 88։

¹⁷⁹ YKH, № 264, at, տող 23։

¹⁸⁰ MEA, № 334։

Մեր կարծիքով, հիշյալ A' «ուժ», «զորություն» գաղափարագիրը նման ձևով հանդիպում է նաև Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.) համանման երկու արձանագրություններում, որը, սակայն, սխալմամբ դիտվում է որպես it և համարվում է DINGIRMEŠ բառի հնչյունային լրացում։ Այնինչ, այնտեղ ասված է. DHal-di-né u-de-da-be DU DUTU DINGIRMEŠ Á qí-u-ra-né hi-šá-ni-be¹⁸¹, այսինքն՝ «հալդեն udedabe, (նաև) Թեյլեբան (և) Շիվինեն։ Աստվածների զորությամբ հողը hisanibe»։

Հետևաբար, քննարկվող պարբերության $GI_4 A'$ հատվածը, որը ուրարտերենով կլինի $bidia de A'$, կարելի է թարգմանել «վերադարձ ուժով», «վերադարձ զորությամբ»։ Սակայն, այս թարգմանությունը վերջնական չէ, քանի որ մենք հիմնավորապես չգիտենք, թե A' գաղափարագրի տակ ուրարտացիները, տվյալ դեպքում, իրենց լեզվի համապատասխան բառերից ո՞ր մեկն են պատկերացրել։ Հիշյալ գաղափարագրի հնչյունային տարբերակը պարզելու գործում մեծապես կարող են օգնել այն կապակցությունները, որոնք կազմված են $bidia de$ «վերադարձ» բալով։ Դրանցից են $i-šá-a-né bi-di-l-a-de$ ¹⁸² «այնտեղից վերադարձ»¹⁸³ և $gu-nu-si-ni-né bi-di-l-a-de$ ¹⁸⁴, «կռվով վերադարձ»¹⁸⁵ նախադասությունները, որոնցից առաջինը տվյալ դեպքում հարմար զուգահեռ լինել չի կարող, բայց երկրորդը բավական գայթակղիչ է, քանի որ ուրարտերենի $gunuše$ «ճակատամարտ», «կռիվ», «պատերազմ», «զուպար»¹⁸⁶ կամ «ճակատամարտ», «պատերազմ»¹⁸⁷ բառը մեր ուսումնասիրությունների համաձայն նշանակում է նաև «զորություն»։ Այսպես՝ DHal-di-is-me uš-[a]-[nu]-né e-'a hu-tu-tú-še e-'a gu-nu-še նախադասություն մեջ¹⁸⁸, որը կրկնվում է նաև ստորև¹⁸⁹ և այլուր¹⁹⁰, $gunuše$ բառը երբեք հնարավոր չէ «պատերազմ» թարգմանել, ինչպես այդ սովորաբար անում են¹⁹¹։ Միայն Գ. Ղափանցյանն է, որ $gunuše$ -ն դիտում է որպես «ուժ»¹⁹², այսինքն՝ գրեթե այն, ինչ մենք թարգմանում ենք «զորություն»։ Ուստի, հիշյալ հատվածը կարելի է թարգմանել «հալդեն-ինձ պարզեց թե՛ Խտտուե, թե՛ զորություն»։

Այսպիսով, $GI_4 A'$ գաղափարագիրը հատվածը, որը կարելի է կարդալ $bidia de A'$ և թարգմանել «վերադարձ ուժով», «վերադարձ զորությամբ», փաստորեն, համընկնում է $gunušine$ $bidia de$ «կռվով վերադարձ» արտահայտությանը, ուստի, $GI_4 A'$ գաղափարագիրը կապակցությունը ընկալվելու է որպես $bidia de$ $gunušine$, այսինքն՝ «վերադարձ կռվով»։ Հետևաբար, միևնույն A' գաղափարագրի տակ ուրարտացիները, հավանաբար,

¹⁸¹ YKH, № 372, տող 26—27 = № 373, տող 25—27 (որտեղ $né=ni$, $de=di$, $ša=ša$, $A'=it$, $DU=DX$)։

¹⁸² YKH, № 155, F, տող 13 (որտեղ $né=ni$, $de=di$)։

¹⁸³ Նույն տեղում, էջ 287։

¹⁸⁴ YKH, № 158, տող 18 (որտեղ $né=ni$, $de=di$)։

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 307։

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 395։

¹⁸⁷ УПД, էջ 88։

¹⁸⁸ YKH, № 127, V, տող 15—16 (որտեղ $né=ni$, $še=hi$)։

¹⁸⁹ YKH, № 127, V, տող 78։

¹⁹⁰ YKH, № 156, AII+A. տող 28—29, № 276, AC, տող 31—32։

¹⁹¹ Նույն տեղում, էջ 227, 228, HChI, էջ 96, 98, 152, 153, 159. 183, УПД, էջ 63, 80։

¹⁹² ՈւՊ, էջ 86 և այլուր։

հասկացել են երկու տարբեր բառեր, այն է՝ ušmaše «զորութուն» և gunuse «կռիվ» (որի նրբերանգներից մեկը, հավանաբար, նշանակել է «զորութուն»)։

Ուրարտերենում միևնույն գաղափարագրի տակ երկու տարբեր բառերի հանդես գալը եզակի երևույթ է։ Այսպես, E'. GAL գաղափարագրի տակ հանդես են գալիս «պալատ» և «ամրոց» բառերը, որոնք հնչմամբ եղել են տարբեր, քանի որ դրանցից մեկը վերջացել է -ašl, իսկ մյուսը -ria հնչյունային լրացմամբ¹⁹³։

Հետևաբար, քննարկվող հատվածը, որը, մեր կարծիքով, անհրաժեշտ է տառադարձել [uš-ta-d]e GI₄ Á [KU]RKu-a-ü-nē-e-de ձևով, կարելի է թարգմանել «Արշավեցի, վերադարձա կովով Քուաունե- (երկրի)-վրա»։

Սարգուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.) արձանագրություններից մեկում, որ գտնվել է Արճեշի մոտակայքում, Ֆ. Շուլցի ընդօրինակության¹⁹⁴ հիման վրա Գ. Մելիքիշվիլին կարդում է SUM-ni-ni lü-i-du-se su-pa արտահայտությունը¹⁹⁵ և թարգմանում. «թող տա(?) luiduse supa»¹⁹⁶, Ֆ. Քյոնիգը եղածը պարզեցնելու փոխարեն ավելի է խճողել այն. SUM-ni-ni x-. ü-i du-se su pa¹⁹⁷ և թարգմանել միայն այսքանը. «Տվեցի? xx»¹⁹⁸։ Ի. Դյակոնովը հիշյալ արտահայտության վերջին բառը դիտում է որպես գաղափարագիր SU.PA, սակայն, չի թարգմանում¹⁹⁹։

Հատվածը, ինչ խոսք, բավական դժվար է ընկալվում, որտեղ միակ հասկանալի բառը SUM-ni-né բայն է, որը տրված է հորդորական հրամայականի եզակի թվի երրորդ դեմքով և փոխարինում է վանկագիր *arinine «թող-տա» ձևին։ Ինչ վերաբերում է lü-i-du-se բառին, ապա այն, թերևս, անհրաժեշտ է դիտել որպես I.KÜŠ և i-du-se, որոնցից առաջինը՝ I.KÜŠ «կանգուն» գաղափարագիրը, ուրարտական արձանագրություններում հանդիպում է նաև այլուր²⁰⁰ և որպես երկարության միավոր կազմում է 51,8 սմ²⁰¹։ Հետևաբար, I.KÜŠ «կանգուն» գաղափարագրին հաջորդող i-du-se անհայտ բառը, ըստ երևույթին, գոյական է և նշանակում է «մորթի(?)», «կաշի(?)»։ Մեր այս ենթադրությունը, թերևս, կարելի է հիմնավորել ուրարտական արձանագրություններում առկա մեկ այլ բառով (ha-i-du-se), որը հանդիպում է Գ. Մելիքիշվիլու տառադարձությամբ ներկայացվող հետևյալ հատվածում. a-la-e me(?) -i ha-i-du-se<...>²⁰²։ Նույնը կրկնվում է նաև Ֆ. Քյոնիգի կողմից՝ առանց me վանկի մոտ նշված հարցականի²⁰³։ Սակայն, տվյալ ha-i-du-se բառը, մեր կարծիքով, նույնպես անհրաժեշտ է բաժանել երկու

¹⁹³ YKH, էջ 376 և այլուր։

¹⁹⁴ MLV, աղյուսակ XL։

¹⁹⁵ YKH, № 167, տող 8—9։

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 313։

¹⁹⁷ HChI, № 110, տող 8—9։

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 134։

¹⁹⁹ СГО, էջ 414։

²⁰⁰ YKH, № 110, լս, տող 9, № 277, տող 11։

²⁰¹ А. В. Сивков, Об основных линейных мерах Урарту и древней Армении (ЗУОН ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 1—2, էջ 85, 88)։

²⁰² YKH, № 142, տող 13։

²⁰³ HChI, № 98 A+B, տող 13։

մասի ՀԱ, որը ՀԱ·LA (աքթադ. zittu) «մաս», «բաժին»²⁰⁴ գաղափարագրի հապաված ձևն է և i-du-še որը նշանակում է «մորթի(?)», «կաշի(?)»: Եթե ընդունելի համարվի մեր կարծիքը, ապա այս երկու բառերին նախորդող me(?)-i (իմա՝ ml(?)-i) «թե՛» բառը կարող է թվալ ոչ իր տեղին օգտագործված: Եվ իզուր չէ՝ որ Գ. Մելիքիշվիլու մոտ այն տրված է հարցականով: Արձանագրության ոչ միայն բնագրի, այլև լուսանկարի վրա (ինչպես հնում կատարված²⁰⁵, այնպես էլ վերջերս վերարտադրված²⁰⁶) շատ պարզ երևում է, որ առկա է ոչ թե me վանկը, այլ I «մեկ» գաղափարագիրը, ճիշտ այնպես, ինչպես այն տառադարձված է Գ. Ղափանցյանի մոտ²⁰⁷, Հետևաբար, a-la-e I-I ՀԱ i-du-še-ի թարգմանությունը կարելի է ճշգրտել, եթե վերծանվեն սկզբի երկու բառերի իմաստները:

Հատվածի առաջին բառը՝ a-la-e, որը, հավանաբար, հնչել է ala|e, [հմմտ. tar-a-e], ըստ Ֆ. Քյոնիգի²⁰⁸ և արձանագրության լուսանկարի²⁰⁹, որը Գ. Մելիքիշվիլու մոտ սխալմամբ նշված է tar-a-g[il]²¹⁰ (իմա՝ tar-a-l[è]), որը նույնպես կարող է հավանական լինել) և tar-a-l-e²¹¹, այսինքն՝ երկու դեպքում էլ tarale «հզոր», մի երևույթ, որի մասին նշված է Ի. Դյակոնովի մոտ²¹², հանդիպում է նաև Կարմիր-րուրից հայտնաբերված կավե սալիկների վրա a-la-jè ձևով²¹³ կամ a-la-jè-e գրություն²¹⁴:

Ի. Դյակոնովը ենթադրում է, որ ala(j)e նշանակում է «տեր(?)»²¹⁵, Մեր կարծիքով, սակայն, ala|e բառը ոչ թե գոյական է, այլ կրավորական տիպի հարակատար դերբայ՝ կազմված ներգործական սեռի բայերից, ինչպիսիք հանդիպում են ուրարտերենում: Օրինակ՝ teru- «դնել», «հաստատել», «սահմանել»²¹⁶ > teraje «դրված», «հաստատված»²¹⁷. didu- [di-du-li-né-²¹⁸ «թող-բռնեն(?)», որը Գ. Մելիքիշվիլու մոտ չի թարգմանված²¹⁹, իսկ Ի. Դյակոնովը այն թարգմանում է «պիտի արդյոք բաժանի(?)»²²⁰ > dida|e (di-da-jè-e)²²¹ «բռնված(?)». սա Ի. Դյակոնովի մոտ տրված է որպես «բաժին(?)»²²². *zumu- (առանձին չի վկայված) > zuma|e (zu-ma-jè²²³ կամ zu-

²⁰⁴ MEA, № 589.

²⁰⁵ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», V, М., 1896, այսուհետև՝ КНЗ), աղյուսակ VII:

²⁰⁶ А. А. Мартиросян, Аргиптихинили, Ереван, 1974, աղյուսակ VI:

²⁰⁷ ՈւՊ, էջ 116 և այլուր:

²⁰⁸ HChI, № 124, V, IV:

²⁰⁹ CICH, աղյուսակ XXXIX:

²¹⁰ УКН, № 276, лс, տող 23:

²¹¹ УКН, № 59, տող 10 և այլուր (որտեղ l=i):

²¹² УПД, էջ 56, ծան. 48:

²¹³ УПД, № 4, лс, տող 9, № 5, лс, տող x+9; № 8, ос, տող y+3:

²¹⁴ УПД, № 7, ос, տող 4:

²¹⁵ Նույն տեղում, էջ 87 և այլուր:

²¹⁶ УКН, էջ 409: УПД, էջ 91:

²¹⁷ УКН, էջ 409:

²¹⁸ УКН, № 96, տող 4 (որտեղ né=ni):

²¹⁹ Նույն տեղում, էջ 392:

²²⁰ СГО, էջ 367:

²²¹ УПД, № 7, ос, տող i:

²²² Նույն տեղում, էջ 88:

²²³ НУНКБ, № 1, տող 21: № 2, տող 2 (որտեղ jè=gi):

ma-jē-e²²⁴), որի իմաստը անհայտ է. hušu- «գցել», «նետել»²²⁵ > hušajē «գցված», որը, սակայն, ի. Մ. Դյակոնովը չի թարգմանել²²⁶. hi-né : za-ab-ze-jē-e-de hu-ša-a-jē-e²²⁷, այսինքն՝ «այժմ բանտ(?) (է) գցված»:

Հետևաբար, alajē անհայտ բառը նույնպես կրավորական տիպի հարակատար դերբայ է՝ կազմված ներգործական սեռի *alu- բայից, որը թերևս նշանակում է «ասել(?)» և հայտնի է սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքով՝ ale (իմա՝ alejē) «ասում(է)»²²⁸: Ուստի, alajē բառը կարող է նշանակել «ասված(?)»։ hi-né : a-la-jē : za-de-e²²⁹, այսինքն՝ «այժմ ասվածը(?) կատարիր», hi-né : a-la-jē-e a-di-re šl-ū-di-le za-de²³⁰, այսինքն՝ «այժմ ասվածը(?) adire šludile կատարիր»։ Քննարկվող հատվածում a-la-e «ասված(?)» (է)՝ դերբայից հետո l-i բառը տրված է սեռական հոլովով, սակայն, հենց այդ պատճառով էլ այն ոչ թե թվական է «մեկի» կամ «առաջինի» իմաստով, այլ առայժմ անհայտ նշանակությամբ գոյական։

Հայտնի է, որ ուրարտերեն suse նշանակում է «մեկ»²³¹, որը կարող էր փոխարինվել նաև l «մեկ» գաղափարագրով։ Սակայն, միևնույն գաղափարագիրը կարող էր արտահայտել ոչ միայն «մեկ», այլև «առաջին» իմաստը և ուրարտերենում կարող էր կազմված լինել ոչ թե suse «մեկ» հիմքով, այլ որևէ ուրիշ բառով, ինչպես հանդիպում է բազմաթիվ լեզուներում. Օրինակ՝ հուն. εἷς, μίς, ἓν «մեկ»²³²—πρῶτος «առաջին»²³³; լատ. unus «մեկ»²³⁴—primus «առաջին», «առելի»²³⁵; սանսկր. ékas «մեկ»—purvīyas «առաջին»²³⁶ և այլն։

Մեզ անհայտ է, թե ուրարտացիները ի՞նչ հիմքով են կազմել «առաջին» բառը, սակայն, սեմական լեզուների օրինակը խիստ գայթակղիչ է։ Այսպես՝ աքքադ. istēnu(m) «մեկ» (արական սեռի), ištēnu(m) «մեկ» (իգական սեռի)²³⁷—ištījūm «առաջին», որը հազվադեպ է օգտագործվում²³⁸, բայց փոխարենը շատ առատ են maḥrū(m) «առաջին» (արական սեռի), maḥritu(m) «առաջին» (իգական սեռի) և կամ pānū(m) «առաջին» (արական սեռի), pāritu(m) «առաջին» (իգական սեռի) բառերը²³⁹։ Այստեղ ամենից ուշագրավը reštū «առաջին» բառն է, որը, փաստորեն, կազմված է reš-ի «զլուի» բառով²⁴⁰։ եզրիպտ.

²²⁴ НУНКБ, № 1, տող 22 (որտեղ jē = gi)։

²²⁵ УКН, էջ 396; УПД, էջ 88։

²²⁶ УПД, էջ 76 և այլուր։

²²⁷ УПД, № 7, лс, տող 16—17։

²²⁸ ՈւՊ, էջ 114 և այլուր, УКН, էջ 387։

²²⁹ УПД, № 4, лс, տող 9։

²³⁰ УПД, № 7, ос, տող 4—5։

²³¹ Նույն տեղում, էջ 91։

²³² И. X. Дворецкий, Древнегреческо-русский словарь. I—II, М., 1968, էջ 468։

²³³ Նույն տեղում, էջ 1435։

²³⁴ А. М. Мазинин, Латинско-русский словарь, М., 1952, էջ 690։

²³⁵ Նույն տեղում, էջ 544։

²³⁶ Զ. Զ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի..., I, Երևան, 1952, էջ 279։

²³⁷ Л. А. Липин, Аккадский язык, М., 1964, էջ 81։

²³⁸ Նույն տեղում, էջ 83։

²³⁹ Նույն տեղում։

²⁴⁰ МЕА, № 115։

w' «մեկ» (արական սեռի) և w'.t «մեկ» (իգական սեռի)-tpj «առաջին», բառացի՝ «գլխավոր» (արական սեռի) և tp.t «առաջին» (իգական սեռի), որոնք կազմված են tp «գլուխ» բառով²⁴¹, [Հմմտ. նաև հենց հայ. մեկ—առաջին, «առաջ» բառով, ռուս. один «մեկ»—первый «առաջին», վրաց. ერთი (ერთი) «մեկ»—პირველ (პირველი) «առաջին» և այլն]: Եթե «առաջին» բառը ուրարտերենում նույնպես կազմված լինի «առաջ» կամ «գլուխ» բառով, ապա քննարկվող հատվածի I-i գաղափարագրի տակ կարող ենք հասկանալ ոչ թե «մեկի», այլ՝ «առջևի(?)» կամ, թերևս, ավելի շուտ՝ «գլխի(?)»: Մեր առաջարկած վերծանումը հավանական համարվելու դեպքում a-la-e I-i ԿԱ I-du-še <...> հատվածը հնարավոր կլինի թարգմանել «ասված(?)» (է).—գլխի(?) մասը (և) մորթին(?)<...>»:

Եթե նկատի ունենանք, որ հիշյալ հատվածը հանդիպում է Արմավիրից գտնված կրոնական բնույթի մի արձանագրության մեջ²⁴², որը, ղեկավարաբար, առանց որևէ հիմքի, փորձում է ժխտել Գ. Մելիքիշվիլին²⁴³, ապա «գլխի(?)» մասը (և) մորթին(?)» արտահայտությունը կարող է ստանալ խիստ ընդգծված բնույթ՝ այն առումով, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն (նախաուրարտական) կոթողների («վիշապների») վրա հաճախ պատկերվում է նման տեսարան (զոհաբերված եղան գլուխը և մորթին՝ վերջավորություններով հանդերձ, առանց միմյանցից անջատելու)²⁴⁴: Այս երևույթը նկատելի է նաև ուրարտական շրջանում և հանդիպում է Կարմիր-բլուրի նյութերում, սկսած Ռուսա II-ի (685—645 թթ. մ. թ. ա.) շրջանից, որտեղ զոհաբերության ժամանակ հատուկ նշանակություն է ունեցել եղան և այլ կենդանիների մորթին, որ առանձնացված է եղել գլխի և վերջավորությունների հետ միասին...»²⁴⁵: Հետևաբար, այն կարող էր գոյություն ունեցած լինել նաև ավելի վաղ՝ Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.) ժամանակներում, նրա իսկ հիմնադրած (մ. թ. ա. 776 թ.) Արգիշթեիսինելե (հետագայի Արմավիր) քաղաքում:

Այս կապակցությամբ հիշենք նաև առ այսօր գոյություն ունեցող ազգագրական մի հետաքրքիր ավանդույթ, որը հանդիպում է Համշենի բնիկների (այժմ՝ Սուխումի—Սոչի հատվածի և հարևան շրջանների հայ բնակիչների) մոտ, որոնց նախնիները՝ ավելի քան 12.000 մարդ, 789 թ. հանդերձ կանամբ և մանկտեալ<...> և այլք ի նախարարաց Հայոց և նոցին հեծելոց»²⁴⁶, ռորոց առաջնորդէր Շապուհ ի տոհմէն Ամատունեաց և Համամ որդի նորա»²⁴⁷, տեղափոխվելով Ճորոխի արևմտյան ափերը, Տամբուր քաղաքի տեղում հիմնադրում են իրենց իշխանանիստ Համամաշեն քաղաքը²⁴⁸: Ըստ Լ. Խաչիկյանի, համշենցիները հիշյալ շրջանն են տեղափոխվել Հայաստանի կենտրոնական մասերից՝ Արագածոտն և Կոտայք գավառներից, կենտրոն

²⁴¹ Н. С. Петровский, Египетский язык, Л., 1958, էջ 142, 148:

²⁴² ՈւՊ, էջ 115—116:

²⁴³ ՄԿԽ, էջ 266:

²⁴⁴ Գ. Ղափանցյան, Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 112, 133, 145, 158:

²⁴⁵ ԿԵ, I, էջ 33; ԿԵ, II, էջ 28; ԵԱ, էջ 222:

²⁴⁶ Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետրբուրգ, 1887, էջ 168:

²⁴⁷ Մետեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետրբուրգ, 1885, էջ 134:

²⁴⁸ Երվանդանու Մամիկոնների եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 57:

ունենալով Օշականը²⁴⁹, Ուստի, նրանք կարող են պահպանած լինել Արա-
րատյան դաշտավայրի՝ ուրարտական շրջանից մնացած որոշ ավանդույթներ,
որոնցից է, թերևս, հետևյալը. մի քանի որսորդ միասին որս անելիս կենդա-
նու (վարազ, այծ, եղնիկ, արջ և այլն) գլուխը և մորթին, ամենայն ակնա-
ծանքով, տալիս են սպանողին (փաստորեն որսի աստծուն, որի դերում
հանդես է գալիս օրվա հերոսը), ապա մնացածը բաժանում են միմյանց միջև
(որտեղ որսացողը արդեն հանդես է գալիս միայն որպես որսորդ և ստա-
նում է իր հասանելիք բաժինը մյուսներին հավասար)։ Մ. Աբեղյանը նշում է.
«Հայտնի է, որ մատաղի կենդանուց եկեղեցուն նվիրում էին զոհի գլուխը,
կաշին ու երիները (առշև ոտները)»...»²⁵⁰, Սա ևս վկայում է հիշյալ ավան-
դույթի հայկական միջավայրում ունեցած տարածման մասին։ Ինչ վերաբե-
րում է քննարկվող հատվածի ենթադրյալ su-pa բառին, ապա այն կարելի
է գիտել որպես գաղափարագիր և ընթերցել KUS·PA (աքքազ. ašāti, ap-
pāti), որը նշանակում է «սանձ»²⁵¹։

Այսպիսով, Սարգուրե II-ի արձանագրության վերոհիշյալ հատվածը կա-
րելի է տառադարձել և թարգմանել հետևյալ կերպ. SUM-ni-né 1·KUS 1-
du-še KUS·PA, այսինքն՝ «թող-տա (մեկ) կանգուն կաշի(?) (կամ) սանձը»։

Հատվածի նման թարգմանությունը կարող է միանգամայն օրինաչափ
համարվել հենց այն պատճառով, որ արձանագրության մեջ Սարգուրե II-ը
խոսելով իր հիմնադրած խաղողի այգու մասին, պատգամ է հղում հետա-
գայում իրեն փոխարինող արքային՝ հոգատար վերաբերմունք ունենալ իր
անունը կրող այգու նկատմամբ²⁵² և խոսքն ուղղելով այգուց խաղող գողա-
ցողներին կամ այնտեղ ձի վարողներին (a-[l]u-še ha-ū-le-e ú-né ú-ru-le-e,
այսինքն՝ «ով գողանա (կամ) ձի վարի»²⁵³, ավելացնում է վերոհիշյալ քըն-
նարկված հատվածը, որը, եթե պատահական կարգադրություն չէ (քանի որ
նման կարգադրություններ հանդիպում են նաև բազմաթիվ այլ արձանագրու-
թյուններում²⁵⁴, կավե սալիկների վրա գրված նամակներում ու փաստաթղթե-
րում²⁵⁵, ինչպես նաև մոտ անցյալում Կարմիր-բլուրից հայտնաբերված մի
ընդարձակ արձանագրության մեջ²⁵⁶ և աքքադական աղբյուրներում²⁵⁷), ապա
այն, փաստորեն, ուրարտական հասարակության մեջ գոյություն ունեցող
տաճարային-արքունական բնույթի ինչ-որ օրենսգրքի հատվածից մեկն է,
օրենսգիրք, որի վերաբերյալ առայժմ շատ աղոտ պատկերացում ունենք և

249 Լ. Ս. Խաչիկյան, էջեր համընդհանուր պատմությունից («Բանբեր Երևանի հա-
մալսարանի», 1969, № 2, էջ 118, 120)։

250 Մ. Խ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դի-
ցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 86։

251 MEA, № 7.

252 YKH, № 167, տող 3—7.

253 YKH, № 167, տող 8 (որտեղ le=li, né=ni)։ Թարգմանությունը մերն է։

254 YKH, № 19, տող 23—25, 28—35, № 27, տող 2, 25—26, 29—31, № 28, BC, տող 15,
AC, տող 10, № 65, տող 24—36, № 89, տող 7—12, № 96, տող 1—7, № 128, A4, տող 11,
№ 142, տող 3—13, № 169, տող 8—12, № 264, տող 10—13, 22—23, № 268, տող 11—17,
23—24, № 276, AC, տող 7—17, № 281, տող 17—25։

255 УПД, № 1, AC, տող 6—7, № 4, AC, տող 6—10; № 7, AC, տող 14—15, 16—17.

256 НУНKB, № 1, տող 7—12, № 2, տող 1—11, № 5, տող 2—11։

257 F. Thureau-Dangin. Une relation de la huitième campagne de Sargon,
Paris, 1912, տող 339—342։

ինչպես կողմնակի²⁵⁸, այնպես էլ ուղղակի այդ հարցի մասին եղած անցյալ²⁵⁹ ու ներկա²⁶⁰ ուսումնասիրությունները, այնուամենայնիվ, մենք են խիստ թերի:

Ռուսա I-ի (735—714 թթ. մ. թ. ա.) արձանագրություններից մեկում, որ հալտնաբերվել է վանից արևելք, Տոնի գյուղում, իր իսկ հիմնադրած արհեստական լճի ափին, Գ. Մելիքիշվիլին կարդում է. KURBI-a-i-na-se bal-te e-[']a [KUR]·KURMES-še gu-ni šú-li ma-nu²⁶¹ և ժանոթագրում է միայն, որ անհասկանալի կոնտեքստում հիշատակվում են Բիաինելի երկիրը և թշնամի երկրները²⁶², Զ. Քյոնիգի մոտ հիշյալ հատվածը տրված է հետևյալ կերպ. KURBI-a-i-na-se BAL-te e-[']a [KUR]KURMES-še gu-ni šú-li ma-nu²⁶³, այսինքն՝ «Բարեբեր (-հողը?)... և անապատային (-հողը?)... (այն ժամանակ) գտնվում էր անբավարար (ոչ պիտանի) վիճակում»²⁶⁴, Ի. Դյակոնովը հիշյալ հատվածը կարդում և թարգմանում է. matBi-a-i-na ŠE-BAL. te-e-[']i(?) PAPMES ŠE gu-ni šú-li ma-nu²⁶⁵ «դեպի Բիաինելի (կամ՝ Բիաինելի համար) ծղոտ... առուններ, գարի(?)...»²⁶⁶ և կամ՝ KURBI-a-i-na ŠE-BAL-te(?) e-[']i [E]·PAPmes-še(?) gu-né šú-le ma-nu²⁶⁷, այսինքն՝ «Ուրարտուում հացով և [...] առուններով իրոք աղքատ էր»²⁶⁸:

Հիշյալ արձանագրության հրատարակված լուսանկարը²⁶⁹, ինչպես նաև պատճենահանված օրինակի պատկերը²⁷⁰, իրոք, կարող էին հնարավորություն ընձեռել նման ընթերցումների և վերականգնումների, եթե հաշվի չառնվեին ուրարտերենի քերականությունը և հատկապես bal և te վանկերի իմաստը, որոնք, անշուշտ, գաղափարագրեր են: Հայտնի է, որ bal վանկագիրը ընթերցվում է նաև գաղափարագիր՝ BAL (աքքադ. heru) «փորել»²⁷¹, իսկ te վանկագիրը՝ TEMEN (աքքադ. temenu) «հիմք», «հողակույտ»²⁷²:

Եթե նկատի ունենանք, որ ուրարտերենում հանդիպող KURKUR գաղափարագիրը²⁷³ փոխարինվում է վանկագիր KURluulne (KUR)lu-lu-l-né-šé, եզակի թվի էրգատիվ հոլով)²⁷⁴ կամ KURluulnele (KUR)lu-lu-l-né-l[e].

²⁵⁸ Г. А. Мелпкшвили, Нагри-Урарту, Тбилиси, 1954, էջ 322—364.

²⁵⁹ К. А. Софроненко, Общественно-политический строй Урарту, М., 1961.

²⁶⁰ А. Г. Сукиасян, Очерк истории государства и права Бианни-Урарту, Ереван, 1975.

²⁶¹ УКН, № 268, տող 7—8.

²⁶² Նույն տեղում, էջ 332 (որտեղ Բիաինելի = Բիաինիլի):

²⁶³ НСН, № 121, տող 7—8.

²⁶⁴ Նույն տեղում, էջ 141.

²⁶⁵ И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике («Эпиграфика Востока», IV, М.—Л., 1951, էջ 112).

²⁶⁶ Նույն տեղում, էջ 113 (որտեղ Բիաինելի = Բիաինիլի):

²⁶⁷ И. М. Дьяконов, Некоторые данные о социальном устройстве Урарту («Проблемы социально-экономической истории Древнего Мира», сборник памяти акад. А. И. Тюменева, М.—Л., 1963, էջ 61, ժան. 28).

²⁶⁸ Նույն տեղում, էջ 60.

²⁶⁹ ССН, աղյուսակ XXV VIII.

²⁷⁰ УКН, լուսանկար 46.

²⁷¹ MEA, № 9.

²⁷² MEA, № 376.

²⁷³ УКН, № 265, տող 7, № 266, տող 18 (որտեղ KURKUR = KUR KUR).

²⁷⁴ УКН, № 281, տող 42 (որտեղ né = ni).

հոգնակի թվի ուղղական հոլով)²⁷⁵ բառով, որը Յ. Ֆրիդրիխը²⁷⁶, Գ. Մելիքիշվիլին²⁷⁷, Ֆ. Քյոնիգը²⁷⁸, Ի. Դյակոնովը²⁷⁹, Մ. Խարայելյանը²⁸⁰ և ուրիշներ թարգմանում են «թշնամի», «թշնամական», բայց, որը ավելի ճիշտ կլիներ թարգմանել «բարբարոսական», ինչպես այդ ընկալում են Գ. Ղափանոյանը²⁸¹, Լ. Նեմեթին²⁸² և ուրիշներ [մեր կարծիքով, երբեմն նաև՝ «վայրենի», «խուպան», եթե խոսքը վերաբերում է հողին. այս իսկ պատճառով էլ [ʽAr]-giš-li-ḫi-na ʽA-za-né KUṚ-né KI-né KURlu-lu-e ma-nu նախադասությունը²⁸³ անհրաժեշտ է թարգմանել ոչ թե «Արգիշթեխինելեում Ազա երկրի թշնամական հող է», ինչպես այդ անում է Գ. Մելիքիշվիլին²⁸⁴, այլ մոտավորապես այնպես, ինչպես այդ տրված է Ֆ. Քյոնիգի մոտ. «Արգիշթեխինելե (քաղաքում) Ազա երկրի հողը անապատային (անմշակ) էր»²⁸⁵, ավելի՛ ճիշտ՝ «Արգիշթեխինելեում՝ Ազա երկրի, հողը վայրենի (=խուպան) էր», ապա Ռուսա I-ի հիշյալ արձանագրության քննարկվող հատվածը կարելի է տառագարձել և թարգմանել հետևյալ կերպ. KURBI-a-I-na-se BALTEMEN e-[ʽ]a [KUR]KUR.MEŠ-še gu-né šū-le ma-nu, այսինքն՝ «Բիաջիք (=ուրարտացիք) փորում-էին հողաշերտը, (ինչպես) նաև՝ բարբարոսները, (որ), իրոք, չոր(?) էր»։ Նման ընթերցումը և թարգմանությունը ոչ միայն չի մեղադրում, այլ ավելի հստակ է դարձնում հիշյալ հատվածին նախորդող և հաջորդող նախադասությունների բովանդակությունը, ուստի և ավելի հավանական է։

Ուրարտեհների չվերծանված գաղափարագրերի թիվը սրանով չի սահմանափակվում։ Այն տասնապատիկ ավելի է քան այստեղ ներկայացվածը։ Սակայն, այսքանն էլ բավական է, որ ակնհայտ դառնա այդ գաղափարագրերի վերծանման անբավարար վիճակը արդի ուրարտագիտության մեջ և, միաժամանակ, անհետաձգելի՝ դրանց վերծանման և հրապարակման անհրաժեշտությունը։

НЕИЗВЕСТНЫЕ ИДЕОГРАММЫ НА ИЗВЕСТНЫХ ПАМЯТНИКАХ ОВАНЕС КАРАГЕЗЯН

Резюме

В течение последних 25 лет (1950—1975 гг.) советскими и зарубежными востоковедами — Б. Б. Пиотровским, Г. А. Меликишвили, И. М. Дьяконовым, Н. В. Арутюняном, М. А. Исраелян, Ф. В. Кенигом и др. — расшифровано более сорока урартских идеограмм.

²⁷⁵ УКН, № 264, ут, տող 29 (որտեղ né=ni, [e]=[i(?)])։

²⁷⁶ J. Friedrich, Die Inschrift des urartäischen Königs Rusa 1. aus Nor-Bajazet („Archiv Orientalní“, vol. III, № 2, Praha, 1931, էջ 257—271) և այլուր։

²⁷⁷ Գ. Ա. Մելիքիշվիլի, К вопросу о древнейшем очаге урартских племен („Вестник древней истории“, 1947, № 4, էջ 23) և այլուր։

²⁷⁸ HChI, էջ 192 և այլուր։

²⁷⁹ УПД, էջ 89 և այլուր։

²⁸⁰ ՀԲՁՊ, էջ 193 և այլուր։

²⁸¹ ՈւՊ, էջ 19, 91, 94։

²⁸² L. Némethy, Das Land Lulu der urartäischen Königsinschriften („Oriens antiquus“, Budapest, 1945, էջ 96)։

²⁸³ УКН, № 142, տող 1—2 (որտեղ né=ni)։

²⁸⁴ Նույն տեղում, էջ 265 (որտեղ Արգիշթեխինելե=Արգիշտիխինիլի)։

²⁸⁵ HChI, էջ 111 (որտեղ Արգիշթեխինելե=Արգիշտիխինիլի)։

Наши исследования показали, что в ряде случаев некоторые из них нуждаются в поправке, а именно: LUKÛ „ювелир“, HUN·GÁ „наемник“, LÚNÍG·SAG „слуга(?)“, GÍR „мечь“, GÍŠNA₅ „барабан“, NÍG·GA «сокровищница» и т. д.

Кроме того, в урартских надписях имеются десятки подобных нерасшифрованных идеограмм, каковыми являются: ZÍZ „хлеб“, „привант“ (прежнее чтение *ás* в мнимой глагольной форме *ašul-*), GÍ₄ „возвращаться“, „повернуть“ (прежнее чтение URU „город“), Á „сила“, „мощь“, „могущество“ (прежнее чтение *Id, It*), I·KÛŠ „локоть“ (прежнее чтение *lú* в мнимой форме *lú-i-du-še*), HÁ „часть“, „доля“ (прежнее чтение *ha* в мнимой форме *ha-i-du-še*), I „один“ или „первый“, под которым в данном случае кроется слово „голова“ [прежнее чтение *me(?)* или *me*], KUS·PA „удила“ (прежнее чтение *su-ra* или *SU·PA*, без перевода), BAL „копать“ (прежнее чтение *bal* в мнимой форме *bal-te*), TEMEN „основа“, „почва“ (прежнее чтение *te* в той же форме *bal-te*), KURKUR „варвар(ский)“, слоговое чтение которого — KURlululne „варвар(ский)“, KURlulue „дикий“, „необработанный“ (прежнее чтение KUR KÚR «вражеская страна») и т. д.

Число урартских нерасшифрованных идеограмм приведенными примерами не ограничивается. Их расшифровка и издание для развития урартоведения весьма необходимо и ценно.